Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2024, Vol. 15, No. 1(43), մարտ, 29-43
https://doi.org/10.46991/BYSU:E/2024.15.1.029

ՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՏԻԿ ՀՌԵՏՈՐԻԿԱՅՈՒՄ

ԱՏՈՄ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Մարդկության հոգևոր մշակույթի զարգացման գործընթացում փիլիսոփայության նշանակալի դերը դրսևորվում է ոչ միայն գիտելիքների ստվար ծավալով, այլև ընդհանրապես գիտելիքի ձևավորման, հիմնավորման և արժևորման իր մեթոդաբանությամբ: Որքան էլ մեր միտքը սկզբունքորեն հակված է օբյեկտիվության և ճշգրտության, կենդանի կյանքը, առավել ևս մարդկային իրողությունները եղել ու մնում են տարամետ մեկնաբանությունների, հաճախ համարժեք, բայց և միմյանց հակասող պատկերացումների ծիրում: Եվ դրա «մեղավորը» ոչ թե մեր մտքի թերացումն է կամ անհետևողականությունը, այլ ցանկացած երևույթի հնարավոր նկարագրությունների անսպառելիությունը՝ աշխարհի համընդհանուր իրողությունների հետ համադրություններում: Այսօրինակ հանգամանքը դժվար, եթե չասենք՝ անհնարին է դարձնում հատկապես մարդկային կյանքի երևույթների, դեպքերի ու իրադարձությունների ունիվերսալ սահմանումն ու գնահատականը: Ճշմարտության և մոլորության, բարու և չարի, օգտակարի և վնասակարի, արդարի և անարդարի, ընդունելիի և մերժելիի, լավի և վատի… զատման, տարանջատման միանշանակ չափանիշի հարցը այսօր էլ փիլիսոփայական բուռն բանավեճերի օրակարգում է: Այն խնդիր է հասարակական կյանքի, սոցիալական գործընթացների կազմակերպման պրակտիկայում:
Նման խնդիրների համակարգման և մեկնության առաքելությամբ դեռևս անտիկ մշակույթում կյանքի կոչվեց հռետորիկան՝ իբրև բանավեճի, փաստարկման եղանակով ընդհանուր եզրահանգման, համոզման հասնելու պրակտիկ մեթոդաբանություն, աշխարհայացքային հարցերին փիլիսոփայական հիմնավորմամբ լուծումներ առաջադրելու հնարավորություն: Այդ առաջադրումներում իրենց արդիականությամբ մշտապես առանձնանում են ստատուսների և լոկուսների մասին տեսությունները, որոնք այսօր էլ երբեմն մշակված, բայց ավելի հաճախ տարերայնորեն գործառվում են մասնավորապես դատական և քաղաքական գործընթացներում, կենդանի ելույթներում, քննարկումներում ու դեբատներում: Երդվյալ ատենակալներով դատարանների ներդրման մեր հեռանկարում և քաղաքական դաշտի դեմոկրատացման մեր իրականությունում ավելի քան կարևոր են թվում ընդհանրապես

* Հոդվածը պատրաստվել է «**Տրամաբանության, փաստարկման և ճարտասանության բաղադրիչների ներդրում և զարգացում բուհական կրթական ծրագրերում**» ԵՊՀ ներքին դրամաշնորհի շրջանակներում:
Ատոմ Վարդումյան – փիլ. գիտ. թեկն., ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ
Атом Вардумян – канд. филос. наук, доцент кафедры Истории, теории философии и логики ЕГУ
Atom Vardumyan – PhD, Associate Professor, Chair of History, Teory of Philosophy and Logic, YSU.
Էլ. փոստ՝ avardumyan@ysu.am. ORCID: https://orcid.org/0009-0008-1633-9398.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 12.03.2024
Գրախոսվել է՝ 14.03.2024
Հաստատվել է՝ 29.03.2024
© The Author(s) 2024

հռետորիկայի և հոդվածում ներկայացված տեսությունների լուսաբանումն ու իմացությունը այդ ոլորտներում գործունեություն իրականացնողների համար:

Բանալի բառեր – *հռետորիկա, հռետորիկայի տեսակներ, վիճահարույց հարց, ելույթի ստրատեգիա, ստատուսներ, լոկուսներ, արտատրամաբանական փաստարկ, սահմանում և գնահատական, բացարկ*

«Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»: Եթե սոկրատեսյան այս հանրահայտ արտահայտության մեջ ամփոփված է մարդկային իմացական հնարավորությունների նվազությունը աշխարհի իրողությունների բովանդակության բարդության համեմատ, ապա մեկ այլ՝ «Ճանաչիր ինքդ քեզ» կարգախոսը հուշում է ոչ պակաս բարդ ու անսպառելի իրողության՝ մարդու՝ աշխարհի մեկնաբանության խնդրում վերը նշված հնարավորություններին վիճակված նույնչափ դժվարությունների մասին: Եվ դա առաջին հերթին վերաբերում է սոցիալական երևույթների, դրանց արտացոլումը հանդիսացող մարդկային ընկալումների, դրանք բնութագրող պատկերացումների, սահմանումների, գնահատող չափանիշների, արժեքների… մեկնությանը, ինչը Սոկրատեսի ժամանակներից ի վեր խանդավառում է մարդկային միտքը բոլոր մակարդակներում՝ սկսած առօրեականից մինչև գեղարվեստականն ու փիլիսոփայականը: Որքանո՞վ է մարդը ի վիճակի ճիշտ ընկալել շրջակա իրականությունը, ինչպե՞ս տարանջատել ճշմարտությունը մոլորությունից կամ կեղծից և ի՞նչ չափանիշով, ո՞րն է բարու և չարի, օգտակարի և վնասակարի, արդարի և անարդարի, օրինակելիի և մերժելիի, լավի և վատի… ջրբաժանը, սահմանազատման բացարձակ սկզբունքը, հարցեր, որոնց պատասխանները որքան անհրաժեշտ, նույնքան ոչ միանշանակ են հասարակական կյանքի, սոցիալական գործընթացների կազմակերպման պրակտիկայում:

Մարդու կյանքն ու աշխարհը, ի տարբերություն կույր և խիստ օրինաչափություններով գործող բնության, ազատ է, սկզբունքորեն կամ հիմնականում անկանխատեսելի, և նրա աշխարհայացքի ձևավորումը՝ որոշակի տարածաժամանակային տեղային մշակութային օրինաչափություններով հանդերձ, շատ դեպքերում իրավիճակով կողմնորոշված: Այսօրինակ բնութագիրը դժվար, եթե չասենք՝ անհնարին է դարձնում մարդկային կյանքի երևույթների, դեպքերի ու իրադարձությունների ունիվերսալ սահմանումն ու գնահատականը: Դրանք խնդիրներ են, ինչպես նկատում է Արիստոտելը, «որոնց շուրջ մենք խորհրդակցում ենք, և որոնց մասին մենք չունենք խիստ որոշակի կանոններ»[1]: Եվ քանի որ այդ ոլորտում ցանկացած լուծում, մեկնաբանություն կամ գնահատական հիրավի մշտապես վիճարկելի է, ուստի սոցիալական գործառույթ, կիրառություն կարող է ունենալ միայն որոշակի պայմանականությունների, պայմանավորվածությունների, նկատառումների և դրանց վրա

[1] **Аристотель**. Риторика. В кн. «Античные риторики». Изд. «Московского университета». М., 1978, с. 21.

ձևավորված պատկերացումների, արժեքների ու չափանիշների համաձայնեցման դեպքում: Այս եղանակով հասարակական կյանքը կազմակերպելու, համակարգելու առաքելությամբ կյանքի կոչվեց հռետորիկան, որի շրջանակներում հնարավոր էր դառնում հարցի կամ երևույթի համակողմանի մեկնաբանություններում ոչ միայն իմաստավորել բովանդակությունը՝ դրանով որոշակիություն հաղորդելով իմացությանը, ոչ միայն բարոյահոգեբանական առումով դրանք ընդունելի դարձնել, այլև այդ միջոցի ընձեռած հնարավորություններով կոնկրետ դիրքորոշում և վարք ձևավորել սուբյեկտի ու մարդկային գործունեության մեջ ընդհանրապես: Եվ այս ճանապարհով է կայանում փիլիսոփայությունը՝ վերացական իմաստասիրությունից իմաստուն կիրառական աշխարհայացքի վերակերպվելով, մի բան, որի իրականացմանն էին ուղղված սոփեստների ստեղծած հռետորիկա-փիլիսոփայություն դասավանդող դպրոցները հին Հունաստանում[2]:

Հռետորիկայի նման առաքելությունը, կարևորումը ավելի քան հասկանալի ու արդարացված էին հին Հունաստանում, քանի որ անտիկ դեմոկրատիայի ժամանակներում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում (իրավական, քաղաքական, կառավարման և այլն) վճռորոշ էին ներգործուն խոսքի ուժը, ժողովրդական լսարանին համոզելու կամ տարհամոզելու պրակտիկան, բանավիճային մեթոդով, քննարկումային եղանակով ամեն տեսակ խնդիրներին լուծում տալու ընթացակարգերը, մինչև իսկ՝ գիտական-իմաստասիրական մտքի, երկերի, մշակույթի ձևավորման տիրույթում:

Լինելով բանավիճային (ռեալ կամ վիրտուալ) գործընթաց և իր առջև ունենալով համոզմունքի ձևավորման խնդիրը՝ հռետորիկայի համակարգում կարևորվում է ելույթի նպատակի, ըստ նպատակի՝ արծարծվող հիմնահարցի բովանդակային որոշարկման, դրման (ելույթի ստրատեգիան) և ելույթի ընթացքում այդ նպատակին տանող եղանակների ու միջոցների (տակտիկան) նախատեսման և իրացման մշակումը: Ասել է թե՝ պահանջվում է հռետորի կողմից նախնական հետազոտական համառ աշխատանք, մատուցվելիք հիմնախնդրի խորը իմացություն դրան առնչվող փաստերը ու իրողությունները որոնելու-բացահայտելու, տարբեր տեսանկյուններից մոտենալու, հնարավոր սահմանումների, մեկնաբանությունների ու գնահատումների ուղղությամբ, որոնցով էլ հենց սկսվում է հռետորության առաջին փուլը որպես լիարժեք գիտական գործունեություն[3]:

Մինչ դրանց հանգամանալից դիտարկմանն անցնելը կարևոր է անդրադառնալ անտիկ տեսություններում ներկայացվող հռետորիկայի տեսակների

---

[2] Տե՛ս **Ա. Ս. Վարդումյան**, Փիլիսոփայություն-փիլիսոփայական փաստարկում-հռետորիկա, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Եր., 2013, № 2, էջ 11-12:

[3] Տե՛ս **Մ. Գ. Մելքոնյան**, Հրեղեն խոսքի ուժը, ԵՊՀ հրատ., Եր., 1979, էջ 11: **Պ. Մ. Պողոսյան**, Հռետորական արվեստի մասին, ԵՊՀ հրատ., Եր., 1994, էջ 13: **Ա. Ս. Վարդումյան**, Հռետորիկա. Արվեստ թե գիտություն, «Սիոն», Երուսաղեմ, 2002, № 1-2-3, էջ 61:

խնդրին, քանի որ, դրանց զանազանություններով պայմանավորված, նկատելի տարբերություններ են ենթադրվում ելույթի տակտիկայի և ստրատեգիայի որոշարկման հարցում: Այդ խնդրի առնչությամբ հանդիպում ենք զանազան հիմքերով (ըստ կիրառության ոլորտի, ըստ ոճի, ըստ առարկայի և այլն) ամենատարբեր դասակարգումների, որոնցում, առավել ընդհանուրների կողքին, տեղ են գտել սոցիալական կյանքի կոնկրետ իրավիճակների հետ անմիջապես կապվող ելույթի տեսակներ՝ քաղաքական, դատական, բեմական, գիտական, ներբողական, հոգևոր, խրախճանքի, դամբանական, ռազմական և այլն[4]: Դրանց որոշակի զանազանությամբ հանդերձ՝ թե՛ ոճական և թե՛ տիրույթների մեծապես խաչվող համադրությամբ անտիկում առավելապես ընդունված է այդուհետ այլևս դասական-ավանդական տարբերակումը, ըստ որի՝ առանձնացվում են հռետորական խոսքի երեք տեսակներ (մյուսներն այս կամ այն կերպ ամփոփվում են դրանցում)՝ **դատական** (գնահատման-iudiciale), **քաղաքական** (խորհրդակցական-deliberativum) և **հանդիսավոր** (իրազեկման-demonstrativum): Թերևս հասկանալի է, և կարիք չկա նշելու, որ դրանք անթափանցելիորեն մեկուսացած չեն միմյանցից, և յուրաքանչյուր տեսակ, նպատակահարմարության բերումով կամ ըստ ընթացքում առաջացող իրավիճակի, անհրաժեշտության, կարող է ներառել մյուսներին առավել բնորոշ ձևեր ու հնարքներ:

Դրանցում իրենց բանավիճային-մրցակցային բնույթով առանձնանում են դատականը և քաղաքականը, որոնցում ենթադրվում է արծարծվող խնդրին ներհակ կողմերի (մեղադրող և պաշտպանական, կառավարող և ընդդիմադիր), որպես կանոն, տարբեր մոտեցումներ, առաջարկվող հակընդդեմ լուծումներ, անկյունագծորեն հակադիր գնահատականներ: Ասել է թե՝ կողմերի համար ավելի քան կարևորվում է հիմնահարցի ներկայացումը թե՛ բովանդակային (իմացական) և թե՛ որակման (արժեքային) առումով: Իսկ որպես նշաձող ու բացարձակ արժեք հանդես են գալիս «արդար» և «անարդար» (դատական հռետորիկայում) և «օգտակարի» և «վնասակարի», ոչ օգտակարի (քաղաքական հռետորիկայում) զույգ կատեգորիաները: Տեղին է նկատել, սակայն, որ ոչ միայն իրավագիտության կամ քաղաքագիտության, այլև փիլիսոփայության մեջ հնարավոր չէ գտնել համընդհանուր մի բնութագիր, համապարփակ մի մեկնաբանություն, ճշգրիտ տրամաբանական մի հիմնավորում, որով վերջնականորեն կսահմանվի դրանց բովանդակությունը: Այս կատեգորիաները գործառելով իբրև սոցիալական իրողությունների բնութագիր՝ այս կամ այն կերպ, այս կամ այն չափով արտացոլում են հասարակության տարբեր միավորների շահերն ու հետաքրքրությունները, մշակութային, աշխարհայացքային տարբեր ռեալությունները և, դրանով պայմանավորված, մշտապես իրենց վրա կրում են տեղայնության, ժամանակայնության, ոչ սակավ նաև՝ իրավիճակայ-

---

[4] Տե՛ս **Վ. Միրզոյան**, Ճարտասանություն, «Իրավունք» հրատ., Եր., 2010, էջ 56: **Марк Туллий Цицерон**. Три трактата об ораторском искусстве. Изд. «Наука». М., 1972, էջ 5:

նության դրոշմը: Այն, ինչ արդար կամ անարդար է որակվում տվյալ իրողության մեջ, որակապես այլ, եթե ոչ հակառակ մեկնաբանություն ու գնահատական կունենա այլ հանգամանքներում: Անգամ նույնականության (չափանիշի նույնական կիրառության) կամ հավասարության (արարքի և հակազդման, պատժի) ակնհայտ ու տրամաբանական սկզբունքները ունիվերսալ, բավարար, իսկ հաճախ խելամիտ չեն կարող լինել սոցիալական իրողությունների բոլոր խնդիրների լուծման համար:

Նույնը վերաբերում է նաև քաղաքական խոսքին: Այստեղ էլ նպատակային գերխնդիրը մնում է առաջադրվող գաղափարը համոզմունքի և գործունեության դրդապատճառի վերածելը: Սակայն, ի տարբերություն դատական խոսքի, որի նշանաբանը «արդարն» է և «անարդարի» զատումը, խոսքի այս տեսակում կողմնորոշիչը «օգտակարի» և «վնասակարի» (ոչ օգտակարի) հասկացություններն են, այդ տեսանկյունից առկա իրավիճակի մեկնաբանությունն ու նկարագիրը և առանձնապես՝ ներկաներին (լսարանին) դրա անմիջական վերաբերելիության բացահայտումը: Որպես ճշմարտության չափանիշներ (երևի ավելի ճիշտ է ասել՝ նախապատվության կողմնորոշիչներ) առաջին պլան են մղվում սոցիալական, բարոյական, հոգեբանական և նման այլ գործոններ, որոնք ինքնին նոր նկարագիր, երանգներ ու նշանակություն են հաղորդում «ճշմարտություն» հասկացությանը (արժեբանական հիմնավորվածություն, հասարակայնորեն արդարացվածություն, ընդունված ավանդույթային ձևերին, նորմերին, կարծրատիպերին, նախատիպային օրինակներին, հանրային կարծիքին համապատասխանություն և այլն) ու կոչված են համոզմունք, դիրքորոշում և վարքագիծ ձևավորելուն[5]:

Հասկանալի է, որ նման գործառույթով առավել կարևորվում են մարդկանց քաղաքական, սոցիալական և կենսական շահերն ու հետաքրքրությունները շոշափող փաստարկները, որոնք, որպես կանոն, մատուցվում են արտահայտված պաթոսով, հուզականությամբ և երևակայությունը բորբոքող զանազան համեմատություններով ու կանխատեսումներով: Եվ, ի տարբերություն դատական խոսքի, որտեղ մեղադրական կամ պաշտպանական ելույթները կառուցվում են հիմնականում իրավական նորմերին առնչվող (իրավական գնահատման) փաստարկներով, քաղաքական խոսքը հնչում է իբրև քննադատություն կամ դրվատանք, ջատագովություն, որում ներկայացվում է խնդրո առարկայի բարոյական, արժեքային, օգտակարության, մարդկայնորեն գնահատելի նշանակությունը, այդ առումով՝ նրա ցանկալի կամ մերժելի բնութագիրը: Տեղին է հիշատակել, որ այսօրինակ մոտեցումն իսպառ չի բացառվում նաև դատական պրակտիկայում, բայց այնտեղ այն կարող է հանդես գալ սոսկ իբրև լրացուցիչ գործոն, «մեղմացուցիչ դեպք հանցանաց», բայց ոչ երբեք՝ վճռորոշ հիմնավորում:

---

[5] Տե՛ս **Ա. Ս. Վարդումյան**, Ճշմարտության պրոբլեմը հռետորության մեջ, «Գիտական աշխատությունների ժողովածու», Եր., «Մանկավարժ», 1998, էջ 196:

Ահա այսօրինակ նկարագրով և անտիկ դեմոկրատիայում դատական ու քաղաքական պրակտիկայում հռետորական խոսքին վերապահված ավելի քան նշանակալի դերով պայմանավորված՝ ելույթի նախապատրաստության պրոցեսում (մասնավորապես՝ Inventio (նյութի հայթայթում) և Dispositio (նյութի բաշխում, տեղադրություն, կարգավորում) բաժիններում)[6] հռետորի համար առաջնային է դառնում հիմնական մեթոդաբանության մշակումը, ինչը վերապահվում էր, այսպես կոչված, ստատուսների տեսությանը, և ինչը, ըստ վիճարկվող հարցի բովանդակային որոշարկման և դրա նպատակային լուծման, գոյաբանական, իմացաբանական և արժեբանական տարբեր մոտեցումներ էր առաջադրում: Հասկանալի վերապահությամբ (քանի որ այն որոշակի կանխորոշում է նաև տակտիկական նախընտրություններ) կարելի է պնդել, որ ստատուսների տեսությունը հիմնականում վերաբերում էր ելույթի բուն ստրատեգիային և իրացնում էր այն:

Ստատուսների (status, stasis – բուն բովանդակությամբ՝ մարտի պատրաստ մարտիկի կեցվածքը) համակարգը և դրան զուգահեռ լոկուսների համակարգը կազմում են խոսքի բովանդակության տեսության (նյութի հայթայթման, գյուտի, ինչպես նաև վիճահարույց հարցին մոտեցման) անալիտիկ մասը՝ ծառայելով իբրև նյութի աղբյուր՝ քննարկվող հարցի վերակառուցման համար: Դրանք նախևառաջ ուղղված են ունկնդրի ողջախոհության և առօրյա բարոյականության արժեքներին ու ընկալումներին, կարծրատիպային պատկերացումներին[7]:

Մինչ կենդանի ելույթին կամ ռեալ քննարկումին հասնելը հռետորը խնդիր ունի վիճահարույց հարցի վերաբերյալ իբրև դիտակետ ներկայացնելու այն տեսանկյունը, որն առավել նպաստավոր ու հեռանկարային կլինի սեփական դիրքավորման համար: Այս առումով առաջարկվում է հնարավոր չորս տարբերակ (ստատուս). ելույթը, հիմնավորումը նախապատրաստել ըստ հիմնախնդրի ներկայացվածության (թե որքանո՞վ է փաստական ապացուցված, հիմնավորված կամ վիճարկելի դեպքի իրողությունը), ըստ որակավորման (անվիճարկելիության դեպքում՝ որքանո՞վ է ճիշտ բնութագրված), ըստ արժեվորման (թե տվյալ բնութագրով հանդերձ՝ ընդհանուր առմամբ ի՞նչ նշանակություն կարող է ունենալ կամ գնահատվել) և ըստ աղբյուրի (թե որքանո՞վ է իրավասու կամ արժանավոր առաջադրողը): Դրանցից որևէ մեկի առաջադրման ուղղվածությամբ էլ հռետորը կառուցում է իր խոսքը՝ գործադրելով համապատասխան փաստարկներ և տակտիկական հնարքներ:

Փաստորեն, ըստ իրականության, բովանդակության, նշանակության և վստահելիության աստիճանի՝ վիճահարույց հարցը քննարկվում է չորս տեսակի խնդրառությամբ՝ ա) **հաստատման ստատուս** (coniecturalis) - արդյո՞ք

---

[6] Տե՛ս **Ա. Ս. Վարդումյան,** Հռետորիկա շատերի և յուրաքանչյուրի համար, Եր., ԵՊՀ հրատ., 2019, էջ 139-142:

[7] Տե՛ս **Гаспаров М. Л.** Античная риторика как система. В кн. «Античная поэтика». Изд. «Наука». М., 1991, էջ 33:

տեղի ունի, իրողությո՞ւն է ներկայացվածը, բ) **սահմանման ստատուս** (finitionis) - որքանո՞վ է դեպքը համապատասխանում ներկայացված սահմանմանը-բնութագրին, գ) **գնահատման ստատուս** (qualitatis) - ինչպե՞ս գնահատել ներկայացվածը բարոյականության, ընդհանուր շահի ու հետաքրքրության տեսակետից, դ) **բացարկի ստատուս** (translationis, praescriptionis) - որքանո՞վ է իրավասու կամ բարոյապես ընկալելի, ընդունելի ինքը՝ ներկայացնողը[8]:

Մեր իմացությանը, դեպքերի և իրադարձությունների մասին մեր պատկերացումների հիմնական մասը մեզ հասու է իբրև միջնորդավորված գիտելիք: Դրանց փաստական իրողության անմիջական ականատեսը կամ մասնակիցը չլինելով՝ մենք, որպես կանոն, ապավինում ենք ողջախոհության միջակայքում տեղավորվող գաղափարներին պարզապես հավատալու սովորույթին կամ տրամաբանական կշռադատություններով, եզրահանգումներով հավաստիանալու մեթոդաբանությանը[9]: Նման պրակտիկան բնորոշ ու լայն գործածական է ինչպես առօրյա, սովորական կյանքում, այնպես էլ սոցիալ-քաղաքական, իրավական (հետաքննչական, դատական) հարաբերություններում, գիտական-տեսական ուսումնասիրություններում: Եթե որևէ դեպքի կամ իրադարձության առնչությամբ առկա չեն փաստական ապացույցներ (ականատեսների վկայություններ, տեխնիկական միջոցներով արձանագրություններ, ինքնախոստովանություն և այլն), և դրանց այդպես եղած լինելը և ընդհանրապես եղած լինելը ըստ էության մտքի բացահայտումներ են (անգամ դրանց առնչվող կամ վերագրվող որոշ պարագաների առկայությամբ), ապա, կախված մոտեցումների, սկզբունքների, այլ չափանիշների տարբերություններից, կհանգեցնեն բոլորովին տարբեր կամ ոչ մի եզրակացության: Ուստի այն, ինչն ընդամենը մտքի (անգամ տրամաբանական) արգասիք է (տեղի ունեցած լինելու, այդպես եղած լինելու, տվյալ անձի կողմից կատարված լինելու և այլ առումով), մտքի այլ համատեքստում, փաստարկման այլ համակարգում, իրավիճակի այլ մեկնաբանության պարագայում միշտ ենթակա է կասկածի, եթե ոչ՝ ուղղակի հերքման: Եվ դրա «տրամաբանությունն ու գոյության իրավունքը» իմաստասիրական այն ճշմարտությունն է, որ իրողությունն արտացոլող (ի տարբերություն վերացական-տրամաբանական կառուցվածքների) ցանկացած միտք, պնդում, դատողություն որոշակի իմաստ, նշանակություն ունեն աշխարհն այդպես տեսնելուն հակող գործոնների տվյալ համակարգում, տվյալ աշխարհայացքում: Այս փիլիսոփայությամբ կողմնորոշվելու և այս մեթոդաբանությամբ առաջնորդվելու հորդոր է պարունակում հաստատման ստատուսը, որով այսպես թե այնպես, այս թե այն չափով, գիտակցված-նպատակասլաց կերպով թե տարերայնորեն գործառում են մարդիկ ինչպես առօրյայում,

---

[8] Տե՛ս **Гаспаров М. Л.** Античная риторика как система, էջ 29:

[9] Տե՛ս **Шакарян Г. Г.** Проблемы детерминации и функционирования философкого знания. изд. «Ереванского университета», Ер., 1982, с. 74: «The Works of Thomas Reid D.D.». Now Fully Collected With Selections From His Unpublished Letters, v. 1, Seventh Edition, Edinburgh, 1872, էջ 470:

այնպես էլ մասնագիտական ոլորտներում, ինչն առավել նկատելի, կիրառելի ու արդյունավետ է քաղաքական և առավել ևս՝ իրավական-դատական պրակտիկայում:

Հաստատման ստատուսը, խիստ տրամաբանական կշռադատությունների, փաստարկների հետ մեկտեղ և գուցե առավել, ենթադրում է հիմնավորման այլ գործիքակազմ, որը անտիկ տեսություններում ներկայացվում է որպես **լոկուսների մասին տեսություն**: «Լոկուս»՝ բառացի նշանակում է տեղ (հռետորիկայի համատեքստում՝ որպես նախադրյալ), որի վրա կառուցվում է հիմնավորումը մտահանգման եղանակով: Քանի որ այդ տեսություններում չենք հանդիպում հասկացության վերջնական սահմանման, ապա առավել լայն բնութագրությամբ կարելի է ներկայացնել. **լոկուսները պատմականորեն ձևավորված, մշակութաբանորեն ընդունված-ճանաչված, գործնականում արդարացված, որոշակի ընդհանրականություն ու կայունություն ունեցող այն պատկերացումներն են (համամարդկային, ազգային ավանդույթներ, սովորույթներ, ֆետիշներ, նախապաշարմունքներ, սիմվոլներ, սոցիալ-հասարակական արժեքներ, մշակութային, քաղաքական, իրավական չափանիշներ, բարոյական վարքի նմուշներ, հավատալիքային, ընդհանուր ընդունված կարծրատիպային ֆիգուրներ և այլն), որոնք, չունենալով խիստ տրամաբանական մեկնաբանություն կամ գիտական հիմնավորում, մարդկային գիտակցության մեջ անքննելի, անքննադատ, անառարկելի, անվերապահ ընդունվող աքսիոմի նշանակություն, իմաստ ունեն, և որոնք գործառվում են իբրև հիմք, նախադրյալ տրամաբանական-ապացուցողական կառուցվածքներում (մտահանգումներում)՝ խոսքին հիմնավորվածություն, համոզչականություն ապահովելու նպատակով:** Թերևս այդ մասին է Գ. Ա. Բրուտյանի դիտարկումը փաստարկման գործընթացում գործառվող միջոցների առնչությամբ. «Սխալ կլիներ ենթադրել, թե աքսիոմներն օգտագործվում են միայն մաթեմատիկական և նման տիպի գիտություններում: Հասարակական գիտությունները նույնպես օգտվում են աքսիոմներից…, որոնց ճշմարտությունը տրամաբանական ապացուցման կարիք չի զգում, քանի որ հաստատված է մարդու դարավոր արտադրական պրակտիկայում»[10]:

Մասնավորապես դատական պրակտիկայում անտիկ տեսությունները առաջարկում են այդ ոլորտում առավել կիրառական մի շարք լոկուսներ, տարբբնույթ փաստարկներ, որոնցով իրացվում է հաստատման ստատուսը, հիմնավորվում կամ հերքվում է տվյալ դեպքի կամ իրադարձության իրողությունը: Դրանք դրսևորվում են տարբեր բնույթի փաստարկներում. ա) **«անձից բխող»**՝ Ունե՞ր արդյոք պատճառ, մտադրություն…., Արդյոք կարո՞ղ է նման վարք/դաստիարակություն/կենսագրություն/նախասիրություն ունեցող մեկը դա անել…, Որքանո՞վ է դա իրագործելի այսպիսի կառուցվածք/առողջություն/

[10] **Գ. Ա. Բրուտյան,** Տրամաբանության դասընթաց, ԵՊՀ հրատ., 1987, էջ 415:

տկարություն/մարզվածություն ունեցող մարդու համար… և այլն. բ) **«իրավիճակից բխող»**՝ Ինչպե՞ս է հնարավոր տվյալ տեղում…, այդ իրավիճակում..., օրվա այդ ժամին…, եղանակային այդ պայմաններում… և այլն, գ) **«հանցանշաններից բխող»**՝ Ինչպե՞ս կարող էին վկայություններ կամ ականատեսներ չլինեին…, հետքեր/հետևանքներ չմնային… և այլն, դ) **«մասնակցությունից բխող»**՝ Ինչպե՞ս կարող էր տուժողը թույլ տալ/հանդուրժել/չհասկանալ/չնկատել/չդիմադրել…, Որքա՞ն է հավանական այդքան մասնակիցների, բոլորի (միաժամանակ) անուշադրությունը/շահախնդրությունը/անտարբերությունը/չիմանալը/մոլորությունը… և այլն[11]:

Որքանո՞վ ապացուցողական, առավել ևս՝ համոզչական ներուժ կարող են ունենալ նմանատիպ փաստարկները լսարանի կարծիքին ներգործության համար: Ելնելով մարդու՝ ողջախոհության շրջանակներում աշխարհը, իրերն ու երևույթները համակարգելու առավել ընդհանրական մեթոդաբանությունից՝ կարելի է կարծել, որ դրանք եթե ոչ ավարտուն, վերջնական, ապա գոնե նշանակալի ձևավորումներ «կիրահրեն» ունկնդրի պատկերացումներում: Չմոռանանք, որ լսարանը, անգամ երդվյալ ատենակալների կազմը, բնավ էլ բաղկացած չէ միայն մասնագիտական (իրավագիտական) պատրաստություն ունեցող անձանցից:

Ամփոփելով կարելի է հաստատման ստատուսը սահմանել որպես ռացիոնալ եղանակով ներկայացված դեպքի, իրադարձության, տեղի ունեցածի, անձի մասնակցության (և այլն) մասին պնդումներին ուղղված (կողմ կամ դեմ) հիմնավորման մեթոդ-համակարգ, որն իբրև փաստարկում (կամ հակափաստարկ) գործառում է ամենատարբեր գործոնների, պարագաների և տրամաբանական տարբեր խստության (հաճախ նաև՝ արտատրամաբանական) ընկալում-պատկերացումներով՝ վիճահարույց հարցի հնարավորությունը կամ գոյությունը վիճարկելու (հաստատելու կամ ժխտելու) նպատակով:

Ինչպես արդեն նշվեց, հաստատման ստատուսը իբրև ելույթի ստրատեգիա իմաստ ունի փաստական ապացույցների բացակայության պարագայում: Մինչդեռ հռետորը հաճախ ստիպված կլինի գործ ունենալ անվիճարկելի դեպքի կամ երևույթի հետ և ընդունել փաստական իրողությունը: Այս պարագայում առաջին պլան է գալիս **սահմանման ստատուսը**, որի տեսական հիմքում ընկած է աշխարհը, իրերն ու երևույթներն այլ կերպ տեսնելու, այլ կերպ ընկալելու, այլ կերպ մեկնաբանելու անսպառ հնարավորությունը: Կրկին նկատենք, որ եթե բնագիտության մեջ ֆիզիկական երևույթները հնարավոր է բնութագրել որոշակի կայուն, հաստատուն նկարագրով և արտացոլել համեմատաբար ավարտուն սահմանումներով, ապա հասարակական-սոցիալական երևույթներին տրվող սահմանումները միշտ «տառապում» են խիստ պայմա-

[11] Տե՛ս **Гаспаров М. Л.** Античная риторика как система, էջ 30-31:

նականության, իրավիճակայնության, դյուրին փոփոխելիության, միակողմանիության հակվածության «քրոնիկ արատներով»: Դրա վկայությունն են բարու, արդարի, գեղեցիկի, օգտակարի և այդօրինակ նշանակալի այլ կատեգորիաների սահմանման դարավոր փորձերը, ինչը կրկին հավաստում է մարդկային իրողությունները որևէ վերջնական սահմանում-նկարագրով սպառելու անկարելիությունը, այլընտրանքային որակումները բացառելու անհնարինությունը և ենթադրում՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կոնկրետ իրավիճակում հռետորի կողմից որևէ երևույթի ուրույն մեկնաբանության «իրավաչափությունը»:

Տրամաբանություն առարկայից մեզ հայտնի են սահմանման բազմաթիվ տեսակներ՝ սահմանում մերձավոր սեռի և տեսակային տարբերության միջոցով, գենետիկական սահմանում, օպերացիոնալ սահմանում, օստենսիվ սահմանում և այլն: Եթե բնագիտության մեջ մեթոդաբանական տեսակետից դրանցից որևէ մեկը կամ ամբողջ համախումբը բավարար կարող է դիտվել առարկան կամ երևույթը սպառիչ ներկայացնելու համար, ապա սոցիալ-հասարակական իրողությունների ավարտուն մեկնությունը դրանց ֆունկցիոնալ-բովանդակային տեսանկյունից մասնակիորեն կարող է ընկալվել ընդամենը ձևի առումով: Բնագիտության սահմանումներում նշանակալի չի կարող լինել նպատակի, դրա կիրառականության գործոնը, և դրանք խստորեն ենթարկված են երևույթը օբյեկտիվ, մարդկային որևիցե հետաքրքրությունից անկախ արտացոլման պահանջին: Մինչդեռ մարդու աշխարհում այլ են ու բազմակերպ թե՛ իրողությունները և թե՛ դրանց մեկնությունները: Ինչպե՞ս վերջնականորեն սահմանել սպանության, դիտավորության, արդարության, դավաճանության, վիրավորանքի, գթասրտության, հավատարմության, հայհոյանքի… և նմանատիպ երևույթները, որպեսզի բավարարեն դրանց առնչվող հնարավոր բոլոր դեպքերին: Իսկ տեղայնացման դեպքում որքանո՞վ նույնական, առավել ևս՝ բոլորի կողմից ընդունելի կլինեն միևնույն երևույթի հնարավոր սահմանումները: Դա մի ընդարձակ ու ազատ դաշտ է հռետորի համար նոր մեկնաբանություններ, սահմանումներ առաջադրելու, անգամ երբ թվում է, թե տվյալ երևույթի առնչությամբ ամեն ինչ պարզաբանված է: Ինչ խոսք, այս ստատուսի կիրարկումը ենթադրում է բանախոսի առանձնակի պատրաստվածություն, խորաթափանցություն, մասնավորապես՝ փիլիսոփայական անալիզի կարողություն: Բայց դա արդեն ստատուսների տեսության խնդիրը չէ:

Ըստ էության, եթե հաստատման ստատուսը միտված է երևույթի տեղի ունեցածության, գոյության վիճարկությանը, ապա, ի գործառություն սահմանման ստատուսի, առնչվում ենք արդեն իրողությունը, հաստատված երևույթը, դեպքը նպատակահարմար կերպով սահմանելու, բնութագրելու, ցանկալի լույսի ներքո մեկնաբանելու մեթոդին: Սահմանման ստատուսը «իրավունք», նպատակահարմարություն և հնարավորություն է հռետորին փաստարկման

անհրաժեշտ բազայի ապահովմամբ սոցիալական ցանկացած երևույթի ինքնատիպ մեկնաբանության ու սահմանման համար, որը տեսական հիմք կծառայի հետագա հիմնավորումների համոզման գործընթացում:

Փիլիսոփայական մտքի զարգացման ամբողջ ընթացքում մի տեսակ անկյունաքարային խնդիր է եղել ու մնում մարդու գիտակցության մեջ, առավել ևս որոշումների կայացման գործընթացում գիտելիքի կոգնիտիվ-ռացիոնալ և արժեքային-իմաստավորող կողմերի համադրման կամ հակադրման տեսական փորձերը: Այդ երկընտրանքում, առավելապես և մասնավորապես փաստարկման թեմատիկային առնչվող ժամանակակից աշխատություններում, ակնհայտ նախապատվություն է վերապահվում գիտելիքի սոցիալ-բարոյական նկարագրին[12]:

Հռետորիկային՝ իբրև կիրառական գիտաճյուղի, նույնպես ավելի հարազատ է գիտելիքի որակումը դրա արժեբանական տեսանկյունից: Եվ հենց այդ նկատառումով է առաջադրվում ելույթի կազմակերպման հաջորդ տարբերակը: Եթե սահմանման ստատուսը կոչված է վեր հանելու առարկաների, երևույթների բնութագիրը իրենց որակական հատկանիշներով և այսպես թե այնպես ընկալվել-ընդունվել ճշմարտությանը իր համապատասխանությամբ, ապա վիճարկվող խնդրին բոլորովին այլ մոտեցում է ենթադրում երրորդ ստրատեգիական ընտրությունը, այն է՝ **գնահատման ստատուսը**: Այնտեղ, որտեղ բախվում են մարդկային շահերն ու հետաքրքրությունները, որտեղ իրողությունների ինչ և ինչպիսին լինելուց զատ և գուցե առավել կարևորվում են դրանց նշանակությունը, վերաբերումը այդ շահերին ու հետաքրքրություններին, որպես կանոն, առաջին պլան է մղվում խնդրի արժեբանական դիտարկումը, դրա հասարակայնորեն արդարացվածության չափանիշը, ինչը և հնարավոր է դարձնում այդ ստատուսի ներառումը հռետորի համոզման գործիքակազմում:

Այս ստատուսի կեցութային հիմքը՝ արժեքային տարաբնույթ համակարգերի ու աշխարհընկալման վրա ձևավորվող հասարակական պրակտիկան, իրականությունն է, որտեղ ռեալ (ընդունված, գործող) պատկերացումների, չափանիշների կողքին մշտապես առկա է այլ մոտեցումների և այլ արժևորումների (նույնչափ տեղին ու արդարացված) անվերջ հնարավորությունը: Այն, ինչն ինքնին, իբրև երևույթ, «բացարձակ չեզոք» մեթոդաբանությամբ, որևէ կոնկրետ իրավիճակից վերացարկված մեկնաբանությամբ (եթե դա հնարավոր է սոցիալական հարցերում կամ իմաստ ունի) ներկայացվում է որոշակի կոնկրետ սահմանումով, այլընտրանքի (այլ սահմանման) բացակայության

---

[12] Տե՛ս **Ս. Հ. Հովհաննիսյան,** Փաստարկման արտատրամաբանական տարրերը, ԵՊՀ հրատ., Եր., 1997, էջ 4: **Հր. Գ. Շաքարյան**, Փաստարկման էթիկական-արժեքային տեսանկյունները, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1996 , № 2, էջ 8: **Брутян Г. А.** Аргументация. Ер., 1984: «How I see Philosophy» (Waismann F.). In «Logical Positivism». (ed. **By Ayer A. J**.). New York. 1966., էջ 350–351: **Perelman Ch and L. Olbrechts-Tyteca.** The New Rhetoric. A Treatise on Argumentation. Unniversity of Notre Press, 1971, էջ 11:

(անհնարինության) դեպքում անգամ կարող է արժանանալ ամենատարբեր, նույնիսկ անկյունագծորեն միմյանց հակադիր գնահատականների:

Ուստի կրկին նախընտրելի է թվում մարդկանց միասնականության համար հռետորիկայի կողմից ավելի հուսալի ու արդյունավետ հռչակված համոզման եղանակը, որի մեջ առանցքային դերակատարություն է վերապահվում գնահատման ստատուսին: Վերջինս ավելի քան նպատակահարմար և ավելի քան պահանջված է մասնավորապես ոչ նպաստավոր սահմանման առկայության պարագայում: Եթե հռետորի անկարողության կամ օբյեկտիվ անկարելիության հետևանքով խնդրո առարկան ոչ մի կերպ չի «տեղավորվում» անհրաժեշտ-ցանկալի սահմանման շրջանակներում, ապա բանախոսին ոչինչ չի մնում անելու, քան «դրությունը փրկել՝ անբարենպաստ որակումներով (սահմանված) երևույթը ներկայացնելու բարենպաստ-արդարացնող գնահատականով:

Այս ստատուսի կիրառությամբ եթե անգամ չի փոխվում տվյալ երևույթի առկա սահմանումը, ապա առնվազն խնդրահարույց է դառնում դրա հանդեպ ստանդարտ-ընդունված վերաբերմունք-գնահատման ուղղակի գործադրման արդարացվածությունը՝ շահեկանության, նշանակալիության կամ գոնե բարոյականության տեսակետից:

Գնահատման ստատուսը, փաստորեն, խնդրո առարկայի դիտարկումբնութագրումն է բարու, գեղեցիկի, արդարի, օգտակարի, նպաստավորի, ընդունելիի, նախապատվելիի (և այլն) տեսանկյունից, որոնք մարդու աշխարհում կյանքի կազմակերպման առաջնահերթ չափանիշներ, սկզբունքներ ու միջոցներ են՝ պատմականորեն ու մշակութաբանորեն արդարացված: Իսկ գնահատականների միանշանակություն կամ վերջնականություն (անգամ իրավիճակի կամ հիմնախնդրի նույնականության դեպքում) մարդկային ընդհանուր և անհատական շահերի, հետաքրքրությունների, կողմնորոշումների, մոտիվացիաների, ընկալման կարողությունների (և այլն) բազմազանության պարագայում ոչ միայն պրակտիկորեն առկա չէ, այլև տեսականորեն գրեթե անհնար է:

Ելույթը նախապատրաստելիս առկա հանգամանքների, ակնհայտ փաստերի, դեպքի բնութագրի բերումով միշտ չէ, որ հռետորը կարող է իրացնել վերը նշված ստատուսներից որևիցե մեկը: Թե՛ դեպքի կամ մասնակցության փաստական իրողության, թե՛ անքննելի սահմանման և թե՛ անբարենպաստ գնահատականի անվիճարկելիության հանգամանքները բանախոսին թողնում են ձեռնունայն իր համար բարենպաստ դիրքորոշումը առաջադրելու, վիճարկության դրվող դեպքը կամ երևույթը նպատակահարմար լույսի ներքո ներկայացնելու խնդրում: Նման իրավիճակներում ստատուսների տեսությունը առաջարկում է այսպես կոչված վերջին հույսի ստրատեգիական տարբերակը՝ **բացարկի ստատուսը**: Ըստ էության դա մի դիրքավորում է, որով բացասվում է խնդրի բովանդակային քննարկումը, հաստատման, սահմանման

կամ գնահատական տալու հնարավորությունը՝ գործընթացը մղելով սուբյեկտիվ դրդապատճառներով անբարեհույս ելակետի հերքման, որևէ առողջ քննարկում իրականացնելու անհնարինության եզրակացության:

Հարկ է նշել, որ բացարկի «ստատուս» (նաև թույլատրելի) լինելը վիճարկվում է որոշ հեղինակների կողմից այն նկատառումով, որ ի դեմս դրա (և ի տարբերություն մյուս ստատուսների) գործ ունենք ոչ թե փաստարկման, թեմայի շուրջ կշռադատություններով հիմնավորման հետ, այլ խուսանավելու մի ստրատեգիայի հետ, երբ **հակընդդեմ փաստարկման փոխարեն առաջադրվում է ներկայացված պնդման ծագման աղբյուրի կամ հենց իրեն՝ ընդդիմախոսին, անվստահելի, անարժան, անվայել կամ մերժելի որակումը, երբ բանախոսը ուղղակի հրաժարվում է ներկայացված խնդրին անդրադառնալուց՝ իրականում փորձելով դրա բացասմանը հասնել ներկայացնողին կամ ծագման աղբյուրը բացասելով** («Եվ ով է ճշմարտությունից/օրենքից/բարոյականությունից խոսում…», «Տեսեք, թե ում/ինչ է վկայակոչում…»): Առաջին հայացքից ոչ այնքան բարեխիղճ այս վարքի դրսևորումները ուշադիր լինելու դեպքում անվերջ կարելի է նկատել հաղորդակցության բոլոր մակարդակներում՝ սկսած առօրյա շփումներից մինչև դատական ու քաղաքական ելույթները, ինչը խոսում է այս հնարքի կենսունակության ու, թերևս, արդյունավետության մասին: Եվ դա անպայման ունի թե՛ սոցիալ-իրավական կարգավորումների և թե՛ բարոյահոգեբանական ընկալումների իր բացատրությունը, արդարացումն ու գործառույթը:

Պատմական փորձով արդարացված թե տարերային անհետևողականությամբ մտքի ասոցիատիվ անցումները պայմանական կապեր, համեմատական միանմանության մոդելներ են ստեղծում անձի, ինստիտուտի, աղբյուրի վարքի, բնութագրի և նրանց ներկայացրած գաղափարի, հարցադրման, դիտարկումների միջև՝ նրանց հանդեպ ունեցած պատկերացումը, դրական թե բացասական վերաբերմունքն ու գնահատականը մեխանիկորեն տարածելով նաև նրանց հարցադրումների վրա: Դրա ամրագրումն է դարերի խորքից եկող Աստվածաշնչյան բանաձևումը՝ «Չար ծառը չի կարող բարի պտուղ տալ»: Նման ենթադրությունն արդյո՞ք հաստատվում է մարդկության պրակտիկայով: Ավելի շատ՝ այո, քան՝ ոչ: Եվ այդ պնդումն ինքնին հենց այդ պրակտիկայի, կյանքի փորձի վերլուծության արդյունք է: Թեև այդ նույն պրակտիկան չի բացառում նաև մերժված աղբյուրի կողմից կառուցողական և տեղին մասնակցության հնարավորությունը: Իսկ խիստ ռացիոնալ և կանոնակարգային մոտեցման դեպքում ցանկացած դատողության պետք է արձագանքել ըստ բովանդակության, այլ ոչ թե ըստ ներկայացնողի: Եվ այնուամենայնիվ, առօրյայում թե իրավաքաղաքական հարաբերություններում որևէ երևույթի մասին բնութագիր կամ գնահատական հնչեցնելիս որևիցե մեկը իր պնդմանը ծանր կշիռ կամ համոզչականություն հաղորդելու նպատակով հազիվ թե կփորձի վկայակոչել

մարդկության-հասարակության ընկալումներում ոչ բարեհամբավ կամ մերժված մեկի իմաստախոսությունը կամ մեկնաբանումը, որքան էլ դրանք տեղին և հիմնավորված թվան: Հակառակ դեպքում մենք գործ կունենանք չխրախուսվող փաստարկի հետ, որը ներկա համատեքստում կարելի է որակել որպես «անտիլոկուս»:

Նկատենք, սակայն, որ նման փաստարկումը արդարացված կարող է լինել, երբ գիտակցված կերպով կիրառվում է ընդդիմախոսի ներկայացրած պնդման, գաղափարի, գնահատականի վարկաբեկման կամ հենց իր՝ ներկայացնողի հանդեպ բացասականորեն կանխակալ դիրքորոշում ձևավորելու նպատակով: Դրա գործածության ակնառու դեպքեր կարելի է արձանագրել հատկապես քաղաքական դեբատներում, երբ ընդդիմախոսի ներկայացրած տեսակետը արժեզրկելու նպատակով հիշատակվում է, որ նման մտքեր հանդիպում ենք մարդկությանը հայտնի պախարակելի վարքով, կենսագրությամբ, պատմության մեջ «հերոստրատյան փառքի» հասած հակահերոսների գաղափարներում: Եվ իրոք, փորձեք ազգի ճակատագրի կամ հեռանկարի վերաբերյալ թեկուզ ամենատեսական ելույթում ձեր կողմից առաջադրվող տեսակետը ամրապնդել Ադոլֆ Հիտլերի «Իմ պայքարը» գրքից քաղված որևիցե, անգամ գրքի համատեքստից ու նպատակից անկախ, չեզոք մի գաղափարով և պատեհ առիթ կստեղծեք ընդդիմախոսին ձեր պնդման իրավաչափությունը եղծելու, ձեզ նշված հեղինակի, նրա չարկամ կերպարի հետ նույնացնելու «իրողությամբ»: Ինչ խոսք, կլինեն անհատներ, ովքեր, թեկուզ ներքուստ, հիշատակված աղբյուրը անհարկի համարելով, կփորձեն խորանալ պնդման ճշմարտացիության կամ արդարացվածության մեջ: Սակայն միջին վիճակագրական լսարանի համար տվյալ գաղափարից հրաժարումը հենց իրեն՝ բանախոսին մերժելով՝ ոչ միայն սպասելի է, այլև օրինաչափություն է:

Իհարկե, ստատուսների տեսությունը, առաջադրելով ներկայացված չորս տարբերակները իբրև հռետորական ելույթի ստրատեգիան որոշելու հնարավորություններ, չի սահմանափակվում դրանց մեկուսի վերլուծությամբ՝ մի կողմ թողնելով կամ անտեսելով հռետորական տակտիկական և արտահայտչական բազմապիսի հնարքների նշանակությունը դրանց իրացման գործընթացում: Վերջիններս ամփոփվում են բառագործածության, տրոպների, խոսքի ֆիգուրների և մի շարք այլ՝ միմյանց փոխլրացնող հնարքների մասին տեսություններում, որոնք ստատուսների տեսության հետ միասնաբար ամբողջացնում ու գրեթե ավարտուն տեսքի են հասցնում հռետորիկայի մասին ուսմունքը անտիկ մշակույթում:

АТОМ ВАРДУМЯН – ***Теория статусов в античной риторике.*** – Значительная роль философии в процессе развития духовной культуры человечества проявляется не только в более чем значительном объёме знаний, но и в методологии формирования, обоснования и оценки знаний в целом. Несмотря на то, что наш разум в своей основе склонен к объективности и точности, жизнь, особенно человеческие реалии, были и остаются предметом различных

интерпретаций, часто эквивалентных, но также и противоречивых идей. И «виновником» его является не недостаток или противоречивость нашего мышления, а неисчерпаемость возможных описаний любого явления в сочетании с универсальными реалиями мира. Такая ситуация затрудняет, если не делает невозможным, особенно в отношении событий и фактов, определение и оценку человеческой жизни. Вопрос об истине и заблуждении, добре и зле, полезном и вредном, справедливом и несправедливом, приемлемом и неприемлемом, хорошем и плохом... до сих пор стоит на повестке горячих философских дискуссий и является проблемой в практике организации общественной жизни и процессов социального развития.
С миссией интерпретации и координации таких проблем риторика была воплощена в жизнь в древней культуре как практическая методология достижения общего вывода, убеждения посредством аргументации и возможности предлагать философски обоснованные решения мировоззренческих проблем. В этом отношении своей современностью всегда отличаются теории о статусах и локусах, которые еще иногда разрабатываются, но чаще элементарно, широко используются, особенно в судебных и политических процессах, живых выступлениях, дискуссиях и дебатах. Более того, в нашей перспективе введения судов присяжных и в нашей реальности демократизации политического поля кажется более чем важным охватить и понять общую риторику и теории, представленные в статье, в частности для тех, кто активен в упомянутой области.

Ключевые слова: *риторика, виды риторики, спорный вопрос, речевая стратегия, статусы, локусы, экстралогический аргумент, определение и оценка, отвод*

ATOM VARDUMYAN – ***The Theory of Status in Ancient Rhetoric*.** – The significant role of philosophy in the development of spiritual culture of humanity is manifested not only in more than substantial volume of knowledge, but also in its methodology of formation and evaluation of knowledge at large. As much as our mind is fundamentally inclined to objectivity and accuracy, life, especially human realities, have been and remain to be subject to various interpretations, and, equivalent, but at the same time contradicting ideas. And its “culprit” is not the shortcoming or inconsistency of our thought, but the inexhaustibility of possible descriptions of any phenomenon in combination with the universal realities of the world. This fact makes it difficult – if not impossible – the universal definition and assessment of phenomena, events and developments of human life. The separation of truth and error, good and evil, useful and harmful, fair and unfair, acceptable and unacceptable, good and bad is still on the agenda of intense philosophical debates and a problem in the practice of organizing social life and social processes. With the mission of coordination and interpretation of such problems, rhetoric was brought to life in ancient culture as practical methodology enabling to achieve common conclusion and persuasion through argumentation, and an opportunity to propose philosophically grounded solutions to universal issues. Among them, the theories on statuses and loci are especially topical. Today, they are well-elaborated theories that are widely used in judicial and political processes, live speeches, discussions and debates. Moreover, in our perspective introduction of jury courts and in today’s reality of democratization of the political field, it seems more than important to discuss rhetoric in general and the theories presented in the present article in particular, especially for those who are active in the mentioned spheres of activity.

Key words: *rhetoric, types of rhetoric, controversial issue, speech strategy, statuses, locuses, extralogical argument, definition and assessment, rejection*